⁂

Քամին՛ փչեց, թող ու դուման
Աշխարքն առան ու բռնին.
Վա՜խ, իմ արեւ, օր ու գիւման
Խաւար դարձան իմ գլխին։

Բա՛րձր սարեր, կա՛րծր քարեր,
Ճանաչ, կանաչ թուփ ու ծառ.
Այ լե՛ռ քարեր, այ ժէ՛ռ քարեր
Դարդիս չունէ՞ք մէկ ճնար։

Աշխարք եկայ, աշխարք մտայ,
Օր ու աստուոր ես չունիմ.
Մարդկանց սրտում խիղճ չգտայ…
Սարե՞ր, քարե՞ր, ի՞նչ անեմ։

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ